Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-1067[1]-11.01.2011-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի ՀՕ-528 քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 241-րդ հոդվածի վերնագրում և 1-ին մասում <անվտանգության> բառից հետո <և> բառը փոխարինել <կամ> բառով.

Հոդված 2. Օրենսգրքի 241-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայի <երկուհարյուրապատիկի> բառը փոխարինել <երկուհազարապատիկի> բառով:

Հոդված 3. Օրենսգրքի 241-րդ հոդվածը լրացնել նոր 4-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.
4.Սույն հոդվածի 1-ին մասով խոշոր վնաս է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող գումարը:

Հոդված 4. Օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասում <անվտանգության> բառից հետո <և> բառը փոխարինել <կամ> բառով

Հոդված 5. Օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայի <հարյուրապատիկից երկուհարյուրհիսնապատիկի> բառերը փոխարինել <հազարապատիկից հազարհինգհարյուրապատիկի> բառերով:

Հոդված 6. Օրենսգրքի 247-րդ հոդվածը լրացնել նոր 4-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.
4.Սույն հոդվածի 1-ին մասով խոշոր վնաս է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող գումարը:

Հոդված 7. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից :

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված <<Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին> ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկությունների

N	Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը, համարը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
	ՀՀ Ազգաին ժողովի պատգամավոր Դ. Հարությունյան	1. Նախագծի 2-րդ հոդվածով փոփոխել միայն Օրենսգրքի 241-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիան: 2.Նախագիծը լրացնել նոր հոդվածով, այնտեղ սահմանելով Օրենսգրքի 241-րդ հոդվածով նախատեսված խոշոր վնասի չափ (հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հազապատիկը գերազանցող գումար): 3. Օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասում <և> բառը փոխարինել <կամ> բառով: 4. Օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիան փոփոխել : 5.Օրենսգրքի 247-րդ հոդվածը լրացնել նոր 4-րդ մասով, սահմանելով խոշոր վնասի չափ (հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հազապատիկը գերազանցող գումար):	1.Փոփոխությունը կատարված է 2. Նախագիծը լրացնել նոր խմբագրությամբ 3-րդ հոդվածով, առաջարկվող փոփոխությունները կատարվել են 3. Նախագիծը լրացնել է նոր 4-րդ հոդվածով. առաջարկվող փոփոխությունները կատարվել են 4.Նախագիծը լրացվել է նոր 5-րդ հոդվածով, առաջարկվող փոփոխությունը կատարվել է 5. Նախագիծը լրացվել է նոր 6-րդ հոդվածով, առաջարկվող փոփոխությունները կատարվել են